որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ պետական տուրքը գանձվում է բազային տուրքի 50-ապատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 9.5 կետի համաձայն՝գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճերով՝ պետական տուրքը գանձվում է բազային տուրքի 30-ապատիկի չափով:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև պետական տուրքի գումարը, որը հաշվարկվում է օրենքով սահմանված կարգով: Նման հաշվարկի հիման վրա է որոշվում օրենքով սահմանված և պարտադիր վճարման ենթակա պետական տուրքի չափը:

Տվյալ պարագայում Հայցվորի կողմից նախապես վճարվել է 80,000 ՀՀ դրամի չափով պետական տուրք, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ ելնելով բավարարված պահանջների համամասնության կարգով պետական տուրքի բռնագանձման սկզբունքից:

(IV) Եզրափակիչ մաս

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական հիմքերը և հիմնավորումները, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 179-րդ, 188-րդ 189-րդ, 191-րդ, 192-րդ և 27.2-րդ գլխով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Եղնիկիպես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի՝ 08.02.2024 թվականի թիվ 27/19702-24 ծանուցմամբ կայացված՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը /որոշումը/ և Երևանի քաղաքապետի 22.02.2024 թվականի թիվ 673 Ա որոշումը՝ «Եղնիկիպես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4. Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից մեկամյա ժամկետում:

Դատավոր՝ **Մալվինա Հարությունյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am